2455

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ

ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմանեց Երկրագործութեան Դեպարտամենտի
բամբակաբուծութեան աւագ մասնագէտ՝ Տ. ԳԻՒԶԱԼԵԱՆ

13932

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՊՐՕԳՐԷՍ» Լօրիս-Մելիքեան փողոց № 1.
1916

2~~45~~

13932

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Թարգմանեց Երկրագործութեան Դեպարտամենտի
բամբակարուծութեան տուգ մասնագէտ՝ Տ. ԳԻՒՉԱԼԵԱՆ

ԹԻՖԼԻՍ
Տպարան «ՊՐՕԳՐԷՍ» Լօրիս-Մելիքեան փողոց № 1.
1916

1916 թուի յունիսի 24-ին հաստատել է Երկրագործութեան Պ. Մինիստրի Օգնականի պաշտօնակատար իսկական պետական խորհրդական՝ Ն. Վ. ԳՐՈՒԴԻՍՈՎ

Ճիշտ է՝ փոխդիրեկտորի տեղ՝
Մ. ՍՏՐԱԽՈՎՍԿԻՑ։

ԲԱՄԲԱԿԱԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆՈՐՄԱԼ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ

I. Ընկերութեան նպատակը եւ դրա իրականացման միջոցները. Ընկերութեան իրաւունքները եւ պարտաւորութիւնները։

§ 1. Բամբակագործական Ընկերութեան (բամբակաբուծութեան Ընկերութեան) նպատակն է՝ նպաստել իր գործունէութեան շրջանում բամբակաբուծութեան և բամբակի արդիւնագործութեան զարգացմանը և կատարելագործութեանը։

Ծանօթութիւն 1. Ընկերութեան հիմնադիրներն են հետևեալ անձնաւորութիւնները՝ .....

.....

.....

.....

Ծանօթութիւն 2. Բամբակագործական Ընկերութեան գործունէութիւնը տարածւում է .....

.....

§ 2. Այդ նպատակներին հասնելու համար Ընկերութեանը թոյլատրւում է.

ա). Ուսումնասիրել բամբակագործութեան զանազան մասնաճիւղերի վիճակը և պարզել դրանց զարգացման և առաջադիմութեան նպաստող բոլոր միջոցները։

Ծանօթութիւն. Այդ բանի համար Բամբակագործական Ընկերութիւնն իր կառավարչութեան վերաբերող հարցերը քննում է իր անդամների պարբերական ժողովներում և յատուկ կազմակերպուած յանձնաժողովներում. բացի դրանից՝ նախօրօք յայտնելով տեղական նահանգապետին՝ կազմակերպում է արշաւախմբեր և էկսկուրսիաներ՝ թէ իր անդամների բամբակագործական անտեսութիւնները դիտելու և թէ ընդհանրապէս բամբակագործութեան և բամբակի արդիւնագործութեան ասպարիզում գիւղատնտեսական հետախուզութիւններ կատարելու նպատակով։

բ). Հոգալ բամբակաբուծութեան ամենականոնաւոր եղանակները մշակելու մասին։

Ծանօթութիւն. Այդ նպատակի համար Ընկերութիւնը փորձով ստուգում է բամբակաբուծութեան մշակոյթի այն եղանակները, որոնք ընդունուած են թէ Ռուսաստանի և թէ արտասահմանի զանազան վայրերում՝ որպէս զի դրանցից տարածի այնպիսիները, որոնք օգտակար են տեղական երկրագործների համար. կազմակերպում է երկրագործական մեքենաների, գործիքների և լծասարքի մրցութիւններ, հիմնում է փորձնական կայարաններ, փորձադաշտեր և այլն, նպաստում է իր գործունէութեան շրջանի այդպիսի հիմնարկութիւններին՝ թէ նրանց, որոնք գոյութիւն ունեն և թէ նրանց, որոնք հիմնուելու են ապագայում։

գ). Օգտակար ցուցմունքներով և խորհուրդներով գիւղատնտեսներին նպաստել կանոնաւոր կերպով կազմակերպելու իրենց գիւղատնտեսական ձեռնարկութիւնները և միջնորդի դեր յանձն առնել գիւղատնտեսներին անհրաժեշտ տարկաներ հայթայթելու, նոյնպէս նրանց անտեսութեան արդիւնքը ծախսի հանելու, հիմնելով դրա համար տեղեկատու յանձնարարական բիւրօներ, երկրագործական պահեստներ և այլն։

Ծանօթութիւն. Գիւղատնտեսական գործիքների, մեքենաների, ինչպէս նաև սերմերի, արհեստական պարարտանիւթերի և գիւղատնտեսական այլ պիտոյքների առ ու ծախսի համար Ընկերութեան հիմնած պահեստներն ուղղակի հարկերի կանոնադրութեան (Уст. прям. налог.) 371-րդ յօդուածի հիման վրայ ազատ են պետական արհեստագործական հարկից։

դ). Հրապարակական դասախօսութիւններ կազմակերպելով, իր աշխատասիրութիւնները տպագրելով և ցրելով՝ տեսական և գործնական տեղեկութիւններ տարածել բամբակաբուծութեան մասին, կազմակերպել ցուցահանդէսներ, աճուրդներ, ինչպէս նաև մեդալներ և պատուի այլ պարգևներ յատկացնելով՝ խրախուսել բամբակագործութեան ասպարիզում տեղի ունեցած աշխատութիւններն ու ծառայութիւնները։

Ծանօթութիւն. Հրապարակական դասախօսութիւններ, ցուցահանդէսներ, փորձնական կայարաններ և ուսումնարանական ագարակներ կազմակերպելու, նոյնպէս իր աշխատասիրութիւնները տպագրելու դէպքում Ընկերութիւնը ենթարկւում է այդ մասին գործող բոլոր որոշումներին և պէտք եղած դէպքում պարտաւոր է պահանջւող թոյլտուութիւնը խնդրել։ Ընկերութեան դրամարանը, եթէ հիմնուած չէ բացարձակապէս միայն Ընկերութեան անդամների հա-

մար, ենթարկվում է Բարձրագոյն հաստատուած 1884 թուի յունուարի 5-ի ժամանակաւոր կանոններին և Ներքին Գործերի Մինիստրի ի լրացումն այդ կանոնների հասարակական գրադարաններ և ընթերցարաններ բանալու և պահելու վերաբերմամբ հրատարակած օրէնքներին և կարգադրութիւններին։

Ե). Ուսումնասիրել և մշակել այն հարցերը, որոնք վերաբերում են ջրային անտեսութեան և բամբակաբուծութեան և բամբակի արդիւնագործութեան տնտեսական մասին։

Ծանօթութիւն. Այդ նպատակով Ընկերութիւնը մշակում է տեղական բամբակագործութեանը վերաբերող ստատիստիկական-տնտեսական տեղեկութիւնները (բամբակի բերքի և առուծախի վերաբերեալ), մշակում է այն տեղեկութիւնները, որոնք վերաբերում են բամբակի և բամբակագործութեան այլ արդիւնքների համար արւող վարկին, ինչպէս նաև մելիորատիւ և իպոտեկ վարկերին, բամբակի և նրա մշակման արդիւնքների փոխադրութեան տարիֆներին, բամբակի փոխադրութեան պայմաններին և արժէքին, բամբակի հարկին. մշակում է այն հարցերը, որոնք վերաբերում են աշխատաւոր ձեռքերին և երկրում աշխատաւոր ձեռքերի քանակութիւնը աւելացընելու միջոցներին. մշակում է որոշ բամբակագործական շրջանի անասունների կերին և ժողովրդի պարենաւորման գործին վերաբերող հարցերը, ինչպէս նաև բամբակագործութեան շրջանների հաղորդակցութեան ճանապարհների բարելաւման հարցերը։

զ). Պատշաճաւոր տեղական և պետական հիմնարկութիւններում միջնորդութիւններ յարուցել բամբակագործութեան հետ կապ ունեցող այս կամ այն կարիքին բաւարարութիւն տալու նպատակով։

Է). Իր եզրակացութիւնները յայտնել բամբակագործութեան վերաբերող այն հարցերի մասին, որոնք յարուցուած և յանձնարարուած են Ընկերութեան քննութեանը՝ տեղական, պետական և հասարակական հիմնարկութիւնների, ինչպէս և մասնաւոր անձանց կողմից։

ը). Իր ներկայացուցիչների միջոցով մասնակցել բամբակագործութեան վերաբերող հարցերի քննութեան համար գումարուած խորհրդաժողովներին և ժողովներին՝ վերջիններիս կողմից հրաւէր ստանալու դէպքում։

§ 3. Օրէնքում մատնանշած ամեն տեսակ եղանակով Ընկերութիւնն իրաւունք ունի ձեռք բերել իր նպատակների համար անհրաժեշտ շարժական և անշարժ գոյքեր, ծախել և գրաւ դնել անշարժ գոյքեր և արժէքաւոր թղթեր, պայմաններ կապել իր գործունէութեանը ենթակայ խնդիրների վերաբերեալ, պարտաւորութիւններ յանձն առնել՝ ի թիւս այլոց նաև դրամական և պահանջներ անել ու պատասխանել դատարանում ընդհանուր օրէնքների հիման վրայ։

Ծանօթութիւն 1. Այն դէպքում, երբ Ընկերութիւնը հողային գոյք է ձեռք բերում այնպիսի վայրում, ուր արգելուած է հրէական կամ օտարերկրացիական հողատիրութիւնը, Խորհրդի անդամների մեծամասնութիւնը, նոյնպէս արգելուած վայրերում գտնուող Ընկերութեան անշարժ գոյքերի հսկիչներն ու կառավարիչները չպէտք է լինեն այն անձնաւորութիւններից, որոնց համար հողատիրութիւնը այդ վայրերում արգելուած է։

Ծանօթութիւն 2. (Պարտադիր է այն ընկերութիւնների համար, որոնց գործունէութիւնը տարածւում է Օրէնքների ժողովածուի IX հատ. 330 յօդ.

2 նկատ. II յաւելուածում թուած կովկասեան երկրի վայրերում)։ Ընկերութեանը քաղաքներից և աւաններից դուրս՝ թէ իբր սեպհականութիւն և թէ ժամանակաւոր տիրապետութեան և շահագործման նպատակով անշարժ գոյք ձեռք բերելը թոյլատրւում է ոչ այլ կերպ, բայց եթէ իւրաքանչիւր անգամ քաղաքացիական իշխանութիւնից յատուկ թոյլտւութիւն ստանալով։

Ծանօթութիւն 3. (Պարտադիր է Թուրքեստանում կազմուող ընկերութիւնների համար)։ Ընկերութեանը՝ թէ որպէս սեպհականութիւն և թէ ժամանակաւոր տիրապետութեան և շահագործման նպատակով անշարժ գոյք ձեռք բերելը թոյլատրւում է ոչ այլ կերպ, բայց եթէ իւրաքանչիւր անգամ քաղաքացիական իշխանութիւնից յատուկ թոյլտւութիւն ստանալով։

§ 4. Ընկերութիւնը գտնւում է Երկրագործութեան Մինիստրութեան Երկրագործական Դեպարտամենտի հրամանատարութեան ներքոյ, որին իւրաքանչիւր տարի հաշիւ է ներկայացնում իր գործունէութեան մասին։ Այդ հաշուի մէջ՝ բացի Ընկերութեան տարեկան ընդհանուր գործունէութեան մասին տուած տեղեկութիւններից, պէտք է զետեղուած լինեն՝ 1) Ընկերութեան բոլոր անդամների և պաշտօն վարողների անուանական ցուցակը, 2) տեղեկութիւններ Ընկերութեան դրամագլուխների վիճակի և գումարների շրջանառութեան մասին և 3) տեղեկութիւններ Ընկերութեանը կից եղող հիմնարկութիւնների մասին։

§ 5. Իր գործունէութիւնը լայնացնելու դէպքում Ընկերութիւնը նահանգապետի թոյլտւութեամբ կարող է բանալ տեղական ճիւղեր։ Տեղական ճիւղերը ոչ թէ անկախ հիմնարկութիւններ են, այլ ամեն բանում ենթարկուած են Ընկերութեանը։

§ 6. Շրջանային Բամբակագործական Ընկերութիւնը գանագան հիմնարկութիւնների առջև յարուցած իր միջնորդութիւնների մասին տեղեկութիւն է տալիս Երկրագործական Դեպարտամենտին և ուղղակի Կենտրոնական Բամբակագործական Կոմիտեին՝ ներկայացնելով նրանց այդ միջնորդութիւնների պատճէները։ Տեղական բամբակագործական ընկերութիւններն իրենց տարեկան հաշիւները ներկայացնում են ի տեղեկութիւն միաժամանակ թէ Երկրագործական Դեպարտամենտին և թէ Կենտրոնական Բամբակագործական Կոմիտեին։

§ 7. Ընկերութիւնն ունի կնիք իր անուան փորագրութեամբ։

§ 8. Ընկերութիւնն իրաւունք ունի միջնորդութիւն յարուցանել Երկրագործութեան Մինիստրութեան առջև պատուի պարգևներ յատկացնելու այն անձնաւորութիւններին, որոնք բամբակագործութեան գանագան մասնաճիւղերում առանձնապէս օգտակար գործունէութիւն են ցոյց տուել։

§ 9. Ընկերութիւնը 1903 թ. հրատարակած Երկրագործութեան կանոնադրութեան (Уст. Сел. Хоз.) 42-րդ յօդ. հիման վրայ, Երկրագործութեան Մինիստրի թոյլտւութեամբ իրաւունք ունի իր նիստերի դահլիճում կախել իր այն անդամների կամ այն կողմնակի անձանց պատկերները, որոնք իրենց գործերով առանձին օգուտ են բերել բամբակագործութեան։

II. Ընկերութեան կազմը

§ 10. Ընկերութիւնը բաղկացած է՝ պատուաւոր, խ-

կական, աշխատակից նոյնպէս և թղթակից անդամներից։ Անդամների թիւը սահմանափակուած չէ։

§ 11. Ընկերութեան անդամ կարող են լինել, առանց կոչման կամ սեռի խտրութեան, այն ռուսահպատակ անձնաւորութիւնները, որոնք պարապում են տեսական կամ գործնական բամբակաբուծութեամբ, կամ որոնք զբաղուած են բամբակի, դրա սերմի, կամ դրա մշակումից ստացուող արդիւնքների առևտուրով։ Առևտրական և արդիւնաբերական հիմնարկութիւնները կարող են մտնել Ընկերութեան կազմի մէջ և մասնակցել նրա նիստերին իրենց ներկայացուցիչների միջոցով։

Ծանօթութիւն. Ընկերութեան անդամ չեն կարող լինել՝ անչափահասները (բացի աստիճանաւորներից), թէ պետական և թէ հասարակական հիմնարկութիւնների կամ ժամանաւոր անձանց հաշուով պահուող միջին և ստորին կարգի գլխաւորների աշակերտները, իսկական ծառայութեան մէջ գտնուող ստորին կարգի զինուորականները, իւնկերները և գատարանական վճռով իրաւունքների սահմանափակման ենթարկուած անձնաւորութիւնները։

III. Անդամներ ընտրելու կարգը, նրանց իրաւունքները եւ պարտաւորութիւնները

§ 12. Տարեկան ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ և ներկայ եղող անդամների ձայների երկու երրորդի մեծամասնութեամբ պատուաւոր անդամ են ընտրւում Խորհրդի կողմից առաջարկուած այն անձնաւորութիւնները, որոնք բամբակագործութեան ասպարիզում յայտնի են իրենց գործունէութեամբ, կամ որոնք առանձին ծառայութիւն են մատուցել Ընկերութեանը։ Պատուաւոր անդամները՝ իսկական անդամի բոլոր իրաւունքներից օգտուելով ազատ են անդամակցական պարտադիր տուրքը վճարելուց։

§ 13. Ընդհանուր ժողովի սովորական նիստերում Խորհրդի, պատուաւոր կամ իսկական անդամների առաջարկութեամբ, գաղտնի քուէարկութեամբ և ձայների հասարակ մեծամասնութեամբ իսկական անդամ են ընտրւում այն անձնաւորութիւնները կամ այն հիմնարկութիւնները, որոնք ցանկութիւն են յայտնել Ընկերութեան կազմի մէջ մտնել, համապատասխանում են § 11-ի պահանջներին և պարտաւորւում են վճարել Ընկերութեան օգտին Կանոնադրութեամբ որոշած գումարը։

Ծանօթութիւն. Այն անձնաւորութիւնները, որոնք ստորագրել են այս կանոնադրութեան ծրագիրը, Ընկերութեան հիմնադիրների անուն են ստանում և առանց քուէարկութեան համարւում են իսկական անդամներ։

§ 14. Իւրաքանչիւր անդամ Ընկերութեան կազմի մէջ մտնելիս վճարում է միանուագ . . բուբլի, այնուհետև ամեն տարի մինչև որոշուած ժամանակի լրանալը անդամները վճարում են . . բուբլի, իսկ հիմնարկութիւնների ներկայացուցիչները . . բուբլի։ Այն անդամները, որոնք միանուագ վճարել են . . բուբլի, ստանալով մշտական իսկական անդամի կոչումը, ազատ են տարեկան տուրքից։ Տարեկան տուրքը փոխարինել թոյլատրւում է և հիմնարկութիւններին, եթէ նրանք վճարում են միանուագ . . բուբլի։ Բոլոր տուրքերի քանակը ընդհանուր ժողովի որոշմամբ Ընկերութիւնը կարող է փոփոխութեան ենթարկել։

§ 15. Այն անդամը, որն Ընկերութեան արտօնած ժամանակի ընթացքում չի վճարել իր պարտադիր տուրքը, հաշուում է հեռացած Ընկերութիւնից. սակայն իր

պարտքը վճարելով՝ առանց քուէարկութեան նորից կարող է ընդունուել Ընկերութեան կազմի մէջ։

§ 16. Իսկական անդամի ընտրութեան եղանակով ընտրւում են երբեմն աշխատակից և թղթակից անդամներ այն անձնաւորութիւնները, որոնք թէև Ընկերութեան գործունէութեան շրջանից դուրս են գտնւում, սակայն այս կամ այն հարցի քննութեան ժամանակ, իրենց ձեռնհաս մասնակցութեամբ կարող են օգտակար լինել Ընկերութեան։ Նոյն պայմաններով կարող են ընտրուել նաև բամբակագործութեան ասպարիզում յայտնի օտարական բամբակագործները, որոնք կարող են նպաստել Ընկերութեան նպատակին նրա գործունէութեան վերաբերմամբ շահաւէտ տեղեկութիւններ տալով, կամ նրա յանձնարարութիւնները կատարելով։ Թղթակից անդամները ազատ են Ընկերութեան օգտին որևէ տուրք վճարելուց։

§ 17. Ընտրելիք թեկնածուների մասին պէտք է յայտնուի անդամներին ոչ ուշ քան երկու շաբաթ առաջ այն նիստից, որի ընթացքում պիտի կատարուի քուէարկութիւնը։

§ 18. Նորընտիր անդամը ստանում է Խորհրդից համապատասխան գրութիւն իր ընտրութեան մասին և դրա հետ միասին սոյն կանոնադրութեան մի օրինակը, կանոնադրութեան հիման վրայ Ընկերութեան հրատարակած կանոնները և Ընկերութեան անդամների ցանկը։

§ 19. Ընկերութեան բոլոր անդամներն իրաւունք ունեն մասնակցել նրա նիստերին՝ պատուաւոր և իսկական անդամները վճռական (իսկ թղթակից և աշխատակից անդամները խորհրդակցական) ձայնի իրաւունքով. նրանք իրաւունք ունեն օգտուել Ընկերութեան միջնորդութեամբ՝ բամբակագործութեան վերաբերեալ հարցերի առիթով զանազան հիմնարկութիւնների և անձանց հետ յարաբերութիւնների մէջ մտնելու համար, նմանապէս իրաւունք

ունեն օգտուել Ընկերութեան կից եղած այն հաստատութիւններից, որոնք հիմնուած են Խորհրդի կազմած և ժողովի հաւանութեանն արժանացած կանոնների հիման վրայ։

§ 20. Եթէ Ընկերութիւնն անհրաժեշտ է գտնում հեռացնել իր անդամներից որևէ մէկին, այդ դէպքում նա որոշում է կայացնում § 40-ում մատնանշած եղանակով։

IV. Ընկերութեան գործավարութիւնը

§ 21. Ընկերութեան ընթացիկ գործերը վարում է Խորհուրդը։ Խորհուրդն ընտրւում է ընդհանուր ժողովում Ընկերութեան պատուաւոր և իսկական անդամների միջից . . . տարով։

§ 22. Խորհուրդը բաղկացած է լինում՝ նախագահից (. . . փոխանդամներից), քարտուղարից, գանձապահից և անդամներից, որոնց թիւը որոշում է ինքն Ընկերութիւնը։ Գանձապահի և քարտուղարի պաշտօնը կարելի է յանձնել Խորհրդի անդամներից որևէ մէկին։ Խորհրդի մշտական բնակատեղին է . . . . . .

§ 23. Պաշտօնավար անձնաւորութիւններն ընտրւում են տարեկան ընդհանուր ժողովում . . . տարով գաղտնի քուէարկութեամբ ներկայ եղող ձայների հասարակ մեծամասնութեամբ. սակայն Խորհրդի կազմից նրանք հեռանում են ոչ միանուագ, այլ Ընկերութեան որոշած յաջորդականութեամբ (Խորհրդի անդամների հիւանդանալն ու տևողական բացակայութիւնն աչքի առաջ ունենալով՝ նոյն ժողովում . . . տարով ընտրւում են փոխանդամներ)։ Խորհրդի կազմից հեռացած անդամներն

իրենց համաձայնութեան դէպքում կարող են ընտրուել նորից։

Ծանօթութիւն։ Իր կազմի մէջ տեղի ունեցած իւրաքանչիւր փոփոխութեան մասին Խորհուրդն անմիջապէս տեղեկութիւն է տալիս նահանգապետին և Երկրագործութեան Դեպարտամենտին։

§ 24. Ընկերութեան գործերի վերաբերեալ գրագրութիւնը կատարւում է Ընկերութեան անունով նախագահի (կամ նրա օգնականներից որևէ մէկի) ստորագրութեամբ և քարտուղարի հաստատութեամբ։ Նախագահի բացակայութեան դէպքում թղթերը ստորագրում է նրան փոխարինող անձնաւորութիւնը։

§ 25. Խորհրդի նիստերը հրաւիրւում են իւրաքանչիւր անհրաժեշտ դէպքում և համարւում են կայացած, եթէ ներկայ են առնուազն . . . անդամ, ներկայ եղողների թւում հաշուելով և ատենապետին (նախագահողին)։ Խորհրդում հարցերը վճռւում են ներկայ եղող ձայների հասարակ մեծամասնութեամբ։ Ձայների հաւասարութեան դէպքում ատենապետի ձայնին առաւելութիւն է տրւում։

26. Խորհուրդն Ընկերութեան գործունէութեանը վերաբերուող իր կատարած բոլոր գործերի մասին ընդհանուր ժողովին հաշիւ է ներկայացնում. իսկ տարեկան ընդհանուր ժողովի համար բացի դրանից նա կազմում է մանրամասն հաշիւ Ընկերութեան տարեկան գործունէութեան, նրա ելևմուտքի և նրա հաստատութիւնների ու ստացուածքի վիճակի մասին։ Սրա հետ միասին Խորհուրդը ներկայացնում է այդ ժողովին յաջորդ տարուայ նախահաշիւը և Ընկերութեան ունենալիք գործունէութեան մասին իր նախագիծը։

§ 27. Խորհրդին թոյլատրւում է խորհրդակցական ձայնի իրաւունքով իր նիստերին հրաւիրել այն անձանց,

որոնք նրա քննութեանը դրած հարցերին մասնակցելով կարող են օգտակար լինել։

§ 28. Նախագահը նախագահում է Խորհրդի և Ընդհանուր ժողովների նիստերին, քննում է բոլոր ստացուած թղթերը, ստորագրում է Ընկերութեան կողմից գրուած թղթերը և հսկում է, որ կանոնադրութիւնը և ժողովների վճիռները անշեղ կերպով կատարուեն։

§ 29. Փոխ-նախագահը նախագահի բացակայութեան դէպքում կատարում է նրա բոլոր պարտականութիւնները, իսկ այդ երկուսի ժամանակաւոր բացակայութեան դէպքում Խորհուրդն իր նիստերը կառավարելու համար ընտրում է իր միջից որևէ մէկին (եթէ կանոնադրութեան մէջ չէ նախատեսուած փոխ-նախագահի պաշտօնը). նախագահի բացակայութեան դէպքում նրան փոխարինում է Խորհրդի անդամներից մէկը աւագութեան կարգով (աւագութիւնը հաշւում է անդամ ընտրուելու օրից)։

§ 30. Քարտուղարը կազմում է Խորհրդի և Ընդհանուր ժողովի նիստերի արձանագրութիւնները, տարեկան հաշիւն ընկերութեան գործունէութեան մասին, պատրաստում է բոլոր գործերը Խորհրդի և Ընդհանուր ժողովի քննութեան համար, վարում է գրագրութիւնը և վաւերացնում է Ընկերութեան կողմից գրուող թղթերը։ Քարտուղարը և գանձապահը կարող են ստանալ դրամական վարձատրութիւն, որի քանակը որոշում է ընդհանուր ժողովից։

Ծանօթութիւն. Ընկերութեան գործերին վերաբերուող բոլոր գրագրութիւնը, բոլոր յարաբերութիւնները և հաշուապահութիւնը Ռուսաստանի սահմաններից ներս կատարւում է ռուսերէն լեզուով։ Ընկերութեան ներքին գործավարութեան վերաբերող բոլոր արձանագրութիւնները, մատեանները, վաւերաթղթերը և այլ գրութիւնները, որոնց հիման վրայ

կատարում է պետական հիմնարկութիւնների և պաշտօնավար անձանց՝ Ընկերութեան գործերի հրա-կողութիւնը, պէտք է տարուէն ռուսերէն լեզուով. միևնոյն ժամանակ ռուսերէն ընագրի հետ զուգընթացաբար թոյլատրուում է այս թղթերը կազմել և այն լեզուով, որով խօսում է տեղական ժողովուրդը։

§ 31. Գանձապահը ստանում է բոլոր դրամական մուտքերը և նախահաշուի ու Խորհրդի որոշումների համաձայն կատարում է ծախսերը, պահում է նոյնպէս Ընկերութեան դրամարկղի և գոյքի ժապաւինեալ մատեանները՝ ստորագրած նախագահի, քարտուղարի և Խորհրդի անդամների կողմից և դրոշմած Ընկերութեան կնիքով։

§ 32. Իւրաքանչիւր պատուաւոր և իսկական անդամ կարող է ներկայ լինել Խորհրդի նիստերին, սակայն առանց ձայնի իրաւունքի։

§ 33. Ընդհանուր ժողովը կարող է քարտուղարի պարտականութիւնները դնել նաև Ընկերութեան անդամների կազմին չպատկանող կողմնակի անձնաւորութեան վրայ։

V. Ընդհանուր ժողովներ

§ 34. Ընկերութեան ընդհանուր ժողովները կարող են գումարուել այն վայրում, ուր գտնուում է Ընկերութեան Խորհուրդը։ Ընդհանուր ժողովները լինում են սովորական և տարեկան։ Սովորական ժողովները գումարուում են կարիք եղած դէպքում (մի ամբողջ տարի առաջ Խորհուրդը նախօրօք նշանակում է տարուայ համար առնուազն . . . նիստ) նոյնպէս և այն դէպքերում, երբ այդ պահանջում են՝ Վերաքննիչ յանձնաժողովը կամ Ընկերութեան անդամներից առնուազն . . . հոգի։ Սովորական ընդհանուր ժողովին քննուում են՝ ընթացիկ գործերը և

13932

ընդհանրապէս Ընկերութեան գործունէութեանը վերաբերող բոլոր հարցերը։ Այդ ժողովներում են ընտրուում նաև իսկական աշխատակից և թղթակից անդամները։

Ծանօթութիւն. Ընկերութեան հիմնադրութիւնից յետոյ նրա հիմնադիր անդամները գումարում են առաջին ընդհանուր ժողովը, որը իր միջից նախագահ ընտրելով՝ ի ժառայ կազմակերպում է Ընկերութիւնը, —որոշում է անդամավճարի քանակը, վճարելու ժամանակը և կարգը, փոխ-նախագահների թիւը, պաշտօնավար անձնաւորութիւնների պաշտօնավարութեան ժամանակամիջոցը, Խորհրդի անդամների թիւը, նրա վճիռների օրինաւորութեան համար անհրաժեշտ համարուած ներկայ եղող անդամների թիւը, տարուայ ընթացքում տեղի ունենալիք ընդհանուր ժողովների պարտադիր քանակը. կատարում է նոյնպէս Ընկերութեան պաշտօնավար անձնաւորութիւնների ընտրութիւնը։ Այս ժողովի որոշումները վերոյիշեալ հարցերի վերաբերմամբ կարելի է վերաքննել միայն Ընկերութեան տարեկան ժողովում։ Ընկերութեան բացման, նոյնպէս պաշտօնավար անձնաւորութիւնների ընտրութեան մասին Ընկերութեան Խորհուրդն անմիջապէս տեղեկութիւն է տալիս Երկրագործութեան Դեպարտամենտին և տեղական նահանգապետին։

Ծանօթութիւն 2. Ընկերութեան ընդհանուր ժողովների ժամանակի, տեղի և զբաղմունքի առարկաների մասին նախօրօք տեղեկութիւն է տրուում բոլոր անդամներին, նոյնպէս տեղական ոստիկանութեան գլխաւորին. ըստ որում ժողովի քննութեան են դրուում միայն այն հարցերը, որոնք անմիջապէս վերաբերում են Ընկերութեան կանոնադրութեամբ

որոշած գործունէութեան և որոնց մասին յայտնուած է ոստիկանութեան գլխաւորին։

§ 35. Տարեկան ընդհանուր ժողովի ժամանակ, որը գումարուում է . . . . ամսին, կարդացուում է Ընկերութեան գործունէութեան հաշիւը նախընթաց տարուայ մասին (վերաստուգող յանձնաժողովի դիտողութիւնները և Խորհրդի բացատրութիւնները յիշատակելով), քննւում և հաստատւում է Խորհրդի կազմած նախահաշիւը հետևեալ տարուայ մասին, նոյնպէս կատարւում է պաշտօնավար անձանց (և նրանց փոխանդամների) և պատուաւոր անդամների ընտրութիւնը։ Բացի դրանից տարեկան ընդհանուր ժողովում սոյն կանոնադրութեան պահանջները պահպանելու պայմանով կարող են վճռուել և բոլոր միւս գործերը։

§ 36. Տարեկան ընդհանուր ժողովն Ընկերութեան տարեկան հաշուի, դրամարկղի և գոյքի քննութեան համար ընտրում է երեք անձից բաղկացած վերաստուգող յանձնաժողով այն պատուաւոր և իսկական անդամներից, որոնք չեն մտնում ոչ Խորհրդի կազմի և ոչ նրանց փոխանդամների թուի մէջ։ Վերաստուգող յանձնաժողովի եզրակացութիւնը ներկայացուում է քննութիւնից անմիջապէս յետոյ գումարուող ընդհանուր ժողովին։

§ 37. Թէ սովորական և թէ արտակարգ ընդհանուր ժողովների գումարումը կատարւում է անուանական ծանուցագրերով, որոնց մէջ նշանակուած պէտք է լինեն ժողովի քննութեանը դրուած բոլոր հարցերը։

§ 38. Ընդհանուր ժողովների օրինաւորութեան համար պահանջւում է ոչ պակաս, քան . . . ապրող անդամների մի երրորդ մասը։ Այն հարցերը, որոնք պէտք է քննուեն ընդհանուր ժողովներում, բացի § 40-ում մատնանշած հարցերից՝ վճռւում են ձայների հասարակ մեծամասնութեամբ։

§ 39. Բաւարար քանակութեամբ անդամներ չգալու

դէպքում Խորհուրդը, ոչ շուտ քան մի շաբաթ և ոչ ուշ քան մի ամիս յետոյ նոյն հարցերի քննութեան համար հրաւիրում է հետևեալ ընդհանուր ժողովը, որն օրինաւոր է համարւում անկախ ներկայ եղող անդամների թուից։

§ 40. 1) Ընկերութեան կանոնադրութիւնը փոփոխելու, 2) նոր հաստատութիւններ բանալու կամ հները փակելու, 3) պարտք անելու և անհրաժեշտ անշարժ կալուածք գնելու կամ ծախելու, 4) անդամներ հեռացնելու, 5) Ընկերութիւնը փակելու և 6) պատուաւոր անդամ ընտրելու համար պահանջւում է առաջին՝ որ նախօրօք (այսքան ժամանակ ընդհանուր ժողովից առաջ) ծանուցուի Ընկերութեան բոլոր անդամներին, երկրորդ՝ որ ժողովին ներկայ լինի Ընկերութեան անդամների առնուազն կէսը և վերջապէս՝ որ վճիռները կայանան ժողովի ներկայ եղող պատուաւոր և իսկական անդամների երկու երրորդի մեծամասնութեամբ։ Ընդհանուր ժողովի որոշած փոփոխութիւնների նախագիծը նահանգապետի միջոցով ներկայացուում է Երկրագործութեան մինիստրութեանը։

VI. Ընկերութեան միջոցները

§ 42. Ընկերութեան միջոցները կազմուում են՝ անդամակցական վճարներից, պետական և հասարակական հիմնարկութիւններից ստացուող նպաստներից, նուէրներից և այլ մուտքերից։

§ 42. Իր տուած պարտաթղթերի համար Ընկերութիւնը պատասխանատու է իրեն պատկանած ամբողջ գոյքով. սակայն այդ պատասխանատուութիւնը չէ տարածւում այն գումարների վրայ, որոնք կողմնակի մարդկանց կողմից դրուած են նրա տրամադրութեան տակ

որոշ նպատակի համար, ինչպէս նաև անդամների անձնական գոյքի վրայ։

§ 43. Երբ որոշում է կայանում Ընկերութիւնը փակելու, այդ դէպքում վերջին ընդհանուր ժողովը վճիռ է կայացնում այն մասին, թէ ինչպէս պէտք է գործադրուեն Ընկերութեան գումարներն ու գոյքը, պարտքերը վճարելուց յետոյ։ Այդ որոշումը կարելի է իրագործել միայն Երկրագործութեան Մինիստրութեան թոյլատրութեամբ։ Ընկերութեան փակումը տեղի ունենալու մասին Խորհուրդը տեղեկացնում է նահանգապետին և յայտարարում է պաշտօնական թերթերում։

VII. Ընկերութեան փակումը

§ 44. Եթէ Ընկերութեան ընդհանուր ժողովների և Խորհրդի նիստերը չեն գումարուում մի տարուայ ընթացքում և այդ ժամանակը լրանալուց յետոյ իսկապէս պարզուում է, որ § 43-ում մատնանշած եղանակով Ընկերութեան փակումը կայացնելու համար անհնար է համապատասխան ժողովներ գումարել, այդ դէպքում Ընկերութեան գործունէութիւնը իրապէս վերջացած է համարուում և դրա մասին նահանգապետն տեղեկութիւն է տալիս Երկրագործութեան Մինիստրութեանը, իսկ Ընկերութեան մնացած գումարներն ու գոյքն անցնում են Երկրագործութեան Մինիստրութեան տրամադրութեան տակ։ Վերջինս տեղական նահանգապետի հետ համաձայնութեան գալով, Ընկերութեան բոլոր պարտաւորութիւններին բաւարարութիւն տալուց յետոյ՝ որոշում է մնացած գումարը համաձայն փակուած Ընկերութեան նպատակների՝ գործադրել տեղական գիւղատնտեսական կարիքների համար։

§ 45. Ընկերութեան գործողութիւնների մէջ պետա-

կան կարգի և հասարակական ապահովութեան և բարոյականութեան դէմ որևէ բան երևան հանելու դէպքում նահանգապետն իրաւունք ունի սեպհական իշխանութեամբ ընդհատել Ընկերութեան գործունէութիւնը։ Միաժամանակ նա առաջադրութիւն է անում Երկրագործութեան մինիստրին Ընկերութիւնը փակելու համար։ Նախ քան Ընկերութեան փակման մասին հարց բարձրացնելը՝ նահանգապետն իրաւունք ունի քննութիւն բանալ նրա գործունէութեան մասին և հարկ համարուած դէպքում բեռիզիայի ենթարկել Ընկերութեան գործավարութիւնը։

§ 46. Ընկերութեան գործունէութեան մէջ օրէնքից կամ կանոնադրութեամբ նրան վերագրած նպատակներից շեղումներ երևան հանելու դէպքում նահանգապետին թոյլատրւում է Ընկերութիւնը առաջարկել իր նշանակած ժամանակի ընթացքում միջոցներ ձեռք առնել տեղի ունեցած անկանոնութիւնների առաջն առնելու համար։

§ 47. Այն դէպքերում, որոնք չեն նախատեսուած այս կանոնադրութեանը մէջ, Ընկերութիւնը ղեկավարւում է իր գործունէութեան վերաբերող կանոններով, նոյնպէս թէ այժմ գործող և թէ ապագայում հրատարակուելիք օրէնքներով և կառավարչական կանոնադրութիւններով։

ՄՄ Հայագիտական գրադարան
MAL014356